

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/7**

**26 հունվարի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի ՀՀ վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված 17.12.2015 թ-ի գանգատները ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 21.12.2015 թ-ի թիվ 5102957 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի գանգատներում բերված փաստարկները.**

ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության հարկային հսկողության բաժնի ավագ հարկային տեսուչ Գևորգ Բրուտյանը, հարկային տեսուչ Սահակ Խաչիկյանը և ընթացիկ հսկողության բաժնի հարկային տեսուչ Կարեն Ախնազարյանը 07.12.2015թ. Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի ՀՎՀՀ 85660545 մոտ, որը գրանցված է եղել 18.11.2015թ. Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի հարկային տեսչությունում, կատարել են ստուգում: Ստուգվող ժամանակաշրջանի սկիզբը, որը նշված է 12.11.2015թ., չի համապատասխանում իրականությանը:

Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանը խնդրում է պարզաբանել ստուգման արդյունքում առաջադրված անհիմն տուգանքը, որը ներկայացվել է դեռ 18 օր չաշխատած բանջարեղենի խանութին:

Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանը պահանջում է նաև ստուգումներ իրականացնող անձանց ապօրինի գործունեության ռեալ գնահատական տալ:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 07.12.2015 թ-ի թիվ 5102957 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 21.12.2015 թ-ի թիվ 5102957 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Մաշտոցի ՀՏ հարկային տեսուչ Կարեն Ախնազարյանի կողմից 09.12.2015 թ-ին ժամը 12:55-ին ք.Երևան, Անդրանիկի 158/9 հասցեում գտնվող խանութից կանխիկ դրամով կատարվել է գնում 420 դրամի չափով՝ 1 կիլոգրամ մանդարին: Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգում իրականացնող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 13:00-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 3850 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման գումարը ներառված չի եղել: Չմուտքագրված գումարը ժամը 13:01-ին մուտքագրվել է ՀԴՄ և դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 420 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 150.000 դրամ:

Նիստին ներկա գտնվող Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանին և նրա ներկայացուցչին ուղղված Հանձնաժողովի անդամների հարցին, թե վերջիններիս կողմից ընդունվում է արդյոք իրականացված ստուգման արդյունքում արձանագրված ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը, հնչեց դրական պատասխան և միևնույն ժամանակ արձանագրված խախտումը բացատրվեց Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի կողմից գործունեությունը նոր սկսելու (ընդամենը 18 օր) հանգամանքով:

Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի կողմից գործունեությունը նոր սկսելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ Ակտով արձանագրված խախտման համար պատասխանատվություն չկիրառելու համար:

Սույն գործին առնչվող ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ իրականացված ստուգմամբ հիմնավորվել է գնված ապրանքի դիմաց վճարված գումարը Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի կողմից ՀԴՄ չմուտքագրելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, կատարված գնումից հետո ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման գումարը ներառված չի եղել: Այնուհետև, չմուտքագրված գումարը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվություն՝ գնված ապրանքի գումարի չափով: Այսինքն, իրականացված ստուգման արդյունքում հիմնավորվել է Ա/Ձ Գեղեցիկ Գրիգորյանի կողմից ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները խախտված լինելու հանգամանքը, որի համար Ակտով կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 21.12.2015 թ-ի թիվ 5102957 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատները՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**